Աշխատանքի նկարագրություն և պահանջներ

Հիփոթեքային վարկավորման նպատակով գույքի ընտրության համար հարթակի դիզայնի մշակման տեխնիկական նկարագրություն

Yerevan 2018

Բովանդակություն

Պրոդուկտի նկարագրությունը 3
Շրջանակը 3
Ընդհանուր պահանջներ 4
STORYS 6
Story 1: Այցելուն փնտրում է իրեն հետաքրքրող անշարժ գույքը 6
Story 2: Այցելուն գրանցվում է համակարգում 6
Story 3: Հաճախորդը դիմում է վարկային հայտին 7
Story 4: Կառուցապատողի աշխատակիցը /ԿԱ/ մուտքագրում է անշարժ գույքի մասին տեղեկատվությունը շտեմարան 7

Պրոդուկտի նկարագրությունը

Կառուցապատողից հիփոթեքային վարկավորմամբ գույք ձեռք բերելու նպատակով հաճախորդներին մեկ Հարթակից անշարժ գույքի ընտրությունը կատարելու հնարավորության ստեղծում

Շրջանակը

Այն իր մեջ ներառում է

- **Հարթակ, որտեղ այցելուն**
  - Ծանոթանում է վաճառքի ենթակա գույքերի մասին տեղեկատվությանը և կատարում է ընտրություն
  - Աշխատացնում է հաշվիչը
  - Գրանցվում է համակարգում
  - Լրացնում է վարկային հայտը
- **Հարթակ, որտեղ Կառուցապատողը**
  - Կատարում է վաճառքի ենթակա գույքերի վերաբերյալ անհրաժեշտ տվյալների և նկարների /նաև հատակագծերի /մուտքագրում
  - Ապահովում է մուտքագրված տեղեկատվության շարունակական թարմացումը

Ընդհանուր պահանջներ

	Պահանջի նկարագրությունը / Requirement Description/
Կայքի նպատակը	Մուտքագրված տեղեկատվության հիման վրա գույքի ընտրության կատարում, գրանցում և վարկային հայտի լրացում
Կայքի լեզուները	Հայերեն, անգլերեն, ռուսերեն
	☐ էջերի քանակը մինչև 15էջ. ☐ Գլխավոր էջ/Landing Page ☐ Գույքի ընտրության էջ ☐ Կառուցապատողի պրոֆայլ ☐ Տարածաշրջանների ընտրության էջ ☐ Շենքերի ընտրության էջ /նաև քարտեզի վրա նշումով/ ☐ Շենքի տվյալների և վաճառքի ենթակա բնակարանների ընտրության էջ ☐ Հարկի և բնակարանի վերաբերյալ տեղեկատվական էջ /տվյալներ և հատակագծերի պատկերներ/ ☐ Հաշվիչի էջ ☐ Վերջնական ընտրված բնակարանի և վարկավորման պայմանների մասին տեղեկատվական էջ ☐ Մարումների գարֆիկի էջ ☐ Օգտատիրոջ Գրանցման էջ ☐ Օգտատիրոջ պրոֆայլ ☐ Վարկային հայտի էջ ☐ Ավտոդիլերի մոդերատորի էջեր ○ Մուտք ○ Պրոֆայլ ○ Մեքենաների գրանցում ☐ **Ակնկալում ենք յուրաքանչյուր էջի դիզայնի առնվազն 3 տարբերակ**
	Responsive Դիզայն (տարբեր չափսերի սարքավորումներին ադապտատիվ)

	Պահանջի նկարագրությունը / Requirement Description/
Կայքի դիզայն	էջերի տեսքը էկրանի չափի փոփոխության ժամանակ սահուն կերպով հարմարվում է էկրանի նոր չափսին՝այսինքն կայքը հարմար է լինում դիտել տարբեր չափսի սարքավորումների միջոցով (mobile,tablet, desktop)
	Արագագործության համար կայքի HTML,JS,CSS մասի օպտիմիզացում
	(Structured Page Load= 1-5sec@512kbit/sec,PageSpeed>85/100)

STORYS

Story 1: Այցելուն փնտրում է իրեն հետաքրքրող անշարժ գույքը

- Այցելուն մուտք է գործում Հարթակ այլ կայքերից հղման միջոցով
- Այցելուն մուտք գործելով Հարթակ կարող է անմիջապես անցնել գույքի ընտրությանը , ինչպես նաև աշխատացնել հաշվիչը և հետո կատարել գույքի ընտրությունը
- Եթե աշխատացնում է հաշվիչը, ապա մուտքագրում է հաշվիչի լրացման ենթակա դաշտերը
- Այցելուն կատարում է գույքի ընտրություն հետևյալ պարամետրերից բոլորը կամ որևէ մեկը նշելու միջոցով
    - Տարածաշրջան
    - Գույքի տեսակ
    - Սենյակների քանակ
    - Մակերես
- Ընտրությունից հետո Այցելուն ընտրում է այն շրջանը որտեղ առկա են իր կողմից նշված պարամետրերով գույքեր ունեցող շենքերը:
- Ընտրելով շրջանը Այցելուն ընտրում է իր կողմից նախընտելի շենքը, որտեղ առկա են իր կողմից նշված պարամետրերով գույքերը:
- Ընտրելով շենքը Այցելուն ընտրում է իր կողմից նախընտելի բնակարանը, ցանկության դեպքում նաև ավտոկանգառը
- Ընտրությունը ավարտելուց հետո ծրագիրը բերում է ընտրված շենքի բնակարանի վերաբերյալ ամբողջացված տվյալները, վարկավորման պայմանները և առաջարկում այցելուին վարկի ստացման ցանկության դեպքում ծանոթանալ վարկավորման մանրամասն տվյալներին և մարումների գրաֆիկին, որին այցելուն ծանոթանում է աշխատացնելով համապատասխան ֆունկցիաները:
- Այցելուն նորից առաջարկվող հաշվիչում կարող է կատարել փոփոխություններ և աշխատացնելով գրաֆիկը ստանալ մարումների գրաֆիկը
- Գույքի ձեռք բերման համար վարկավորմամբ հետաքրքրված լինելու դեպքում Այցելուն գրանցվում է համակարգում:

Story 2: Այցելուն գրանցվում է համակարգում

- Այցելուն համակարգում գրանցման համար աշխատացնում է Գրանցվել ֆունկցիան և լրացնում է հետևյալ տեղեկատվությունը.
    - Անուն
    - Ազգանուն
    - էլ. Հասցե
    - Բջջային հեռախոսահամար
- Լրացնելուց հետո աշխատացնում է <Նույնականացում> ֆունկցիան, որի արդյունքում լրացված հեռախոսահամարին ստանում է SMS հաղորդագրություն և հայտի համապատասխան դաշտում լրացնում է ստացված կոդը և հաստատում այն:

- Կոդի ճիշտ լրացման դեպքում ստանում է հաղորդագրություն գրանցման բարեհաջող ավարտի և հետագա քայլերի կատարման մասին /սխալի դեպքում գրանցում չի կատարվում և տեղեկացվում է այդ մասին/:

Story 3: Հաճախորդը դիմում է վարկային հայտին

- Գրանցվելուց հետո Հաճախորդը լրացնում է վարկային հայտը
- Վարկային հայտում լրացնում է պահանջվող դաշտերը բացառությամբ այն դաշտերի որոնք արդեն լրացված են /ավտոմատ տեղափոխվում է / և հաստատում այն:
- Վարկային հայտը լրացնելիս ընտում է նաև մասնաճյուղը որտեղից ցանկանում է ստանալ վարկը
- Վարկային հայտի լրացումից և հաստատումից հետո ստանում է հաղորդագրություն վարկային հայտի ստացված լինելու մասին, հետադարձ կապի ապահովման ժամկետի մասին և Բանկի կոնտակտային տվյալների մասին, ինչպես նաև գույքի ռեզերվացված լինելու ժամկետի մասին

Story 4: Կառուցապատողի աշխատակիցը /ԿԱ/ մուտքագրում է անշարժ գույքի մասին տեղեկատվությունը շտեմարան

- Շտեմարանում տվյալների մուտքագրում կամ փոփոխություն կատարելու համար ԿԱ-ն մուտք է գործում համակարգ բանկի կողմից իրեն տրված օգտագործողի ծածկագրով:
- ԿԱ-ն շտեմարանում մուտքագրում է վաճառքի ենթակա գույքերի վերաբերյալ հետևյալ տվյալները.
  - Կառուցապատման ենթակա շենքերի նկարները /JPG/
  - Շենքի նկարագիրը /ըստ առանձին դաշտերի/
  - Շենքի /տարածքի/ հատակագիծը /ընդհանուր և ըստ հարկերի /JPG/
  - Վաճառքի ենթակա բնակարանների ցանկը մանրամասն տվյալները և արժեքը /տեքստային/
  - Վաճառքի ենթակա բնակարանների հատակագծերը /JPG/
  - Ավտոկանգառի/ների/հատակագծերը /JPG/
  - Վաճառքի ենթակա ավտոկանգառների ցանկը մանրամասն տվյալները և արժեքը /ըստ առանձին դաշտերի/
  - Գույքի կարգավիճակը /ընտրելու հնարավորությամբ/
  - Կոնտակտային անձանց տվյալները /ըստ առանձին դաշտերի/
- ԿԱ-ի տվյալների մուտքագրման կամ փոփոխության մասին ավտոմատ գնում է տեղեկացում հաստատողին /Կառուցապատողի հաստատող/,
- Հաստատողը ստուգում է մուտքագրված տվյալները և հաստատում այն: